

պէսի վիճակի ենթարկուած են ընդհանրապէս Անդրյորդանանի երբեմնի բարգաւաճ հայ գաղութները, որոնց մէջ կը գտնուէր Սալթի գաղութը: Գաղութին ցրուումէն յետոյ Սալթի Յոյները կը տիրանան Հայոց եկեղեցիին՝ որ մօտիկն էր իրենց մեծ եկեղեցիին. տեղագրութիւնն իսկ կը վկայէ թէ եկեղեցին Յունաց չէր պատկանէր. քով քովի երկու յոյն եկեղեցիներու գոյութիւնը չ'արդարանար. արդէն փոքրին մէջ ժամերգութիւն չ'են կատարեր. հայոց կը վերաբերէր փոքրը որ յետոյ բռնագրաւուած է, ինչպէս Քէրէկի Ս. Գէորգը, որ նոյնպէս գոյութիւն ունի մինչեւ ցարդ: Սալթի Ս. Գէորգի եկեղեցին կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը, երկայնութիւնը 15 մէթր, լայնութիւնը 8 մէթրը, բարձրութիւնը 8 մէթր, տանիքը հարթ հաւասար, եւ քարուկիր է, պատուհան չ'ունի, լոյսը կ'առնէ սեղանին կամարի վրայի երկու փոքր պատուհաններէն, միափեղկ փայտեայ դուռը կը բացուի հարաւային կողմէն, եկեղեցին դէպ ի արեւմուտք հետզհետէ կը բարձրանայ եւ արեւմտեան կողմը ապառաժի վրայ շինուած է. նոյն կողմը՝ պատին ներսի կողմէն կայ քարայր մը:

Երուսաղէմէն յօգուածապիւր մը «Քսևի մը խօսք սաղիսակաւե հայ հնագրութեան մասին» խորագրով գրուածք մը ունի 1898ի Հանդիս Անսորեայի մէջ (էջ 161) ուր կ'ըսէ թէ «մասնաւորապէս կարող եմ յիշել Սալթի եկեղեցին, որոյ գմբէթի վարի մասերուն վրայ հայկական գրեր ցարդ անաղարտ մնացած են»: Ինչպէս յիշեցինք վերեւ, Սալթի եկեղեցին գմբէթ չ'ունի հետեւաբար գմբէթին վրայ հայկական գիրերու գոյութիւնը սխալ տեղեկագրի մը վրայ հաղորդագրուած կը թուի, միայն ուրիշներ ինձ հաւաստեցին թէ եկեղեցիին դրան վրայ կէս կանդուն մեծութեամբ յիշատակարան քարին հայերէն գիրերը ջնջուած կամ տաշուած կ'երևնան:

